**Ցեղասպանության 10 փուլերն ըստ դոկտոր Գրեգոր Սթանթոնի**

| | Փուլեր 1-10 |
|---|---|
| 1. դասակարգում | Հասարակության մեջ բաժանումները ստիպում են մարդկանց դասակարգվել որպես "մեր" և " նրանց": Եթե հասարակությունը նման դասակարգման է ենթարկվում,ապա դա կարող է տանել ցեղասպանության: Օրինակ' "Հութու"-ն ընդդեմ " Թութսիս"-ի Ռուանդայում: |
| 2. խորհրդանշություն | Եթե խորհրդանիշները, որոնք ցույց են տալիս տվյալ խմբի ծագումը, մշակույթը,կրոնը կամ ազգությունը, խառնվում են ատելության հետ,ապա դա տանում է փոքրամասնությունների ապամարդկայնացման: Օրինակ' նացիստական Գերմանիայում հրեաներին ստիպում են Դեղին Աստղեր կրել: |
| 3. խտրականության | Ոճրագործներն օգտագործործում են օրենք,սովորույթներ, քաղաքական իշխանություն և զրկում փոքրամասնություններին իրենց իրավունքներից: Օրինակ' խտրականություն աֆրիկա-ամերիկացիների դեմ ԱՄՆ- ի Սահմանադրության մեջ: |
| 4. Ապամարդկայնացում | Մարդկության մի խումբը ժխտում է մյուսի գոյությունը' նրանց անվանելով անասուններ,ուտիճներ կամ ախտ: Ռադիո, հեռուստատեսությունն ու այլ միջոցները նպաստում են ատելության խոսքի տարածմանը: Օրինակ' Օսմանյան կայսրությունում հայերին անվանում են սրի,թրի մնացորդներ: |
| 5. կազմակերպութուն | Ցեղասպանությունը հենց այնպես երբեք տեղի չի ունենում: Ազգեր ու որոշակի խմբեր կազմակերպում են սպանություն, տանջանք ու զոհերի տարհանում: Օրինակ' Հինդուական ամբոխները հարձակումներ կազմակերպեցին հնդկամուսուլմանական համայնքների նկատմամբ: |
| 6. Բևեռացում | Ծայրահեղականները մարդկանց խմբերի են բաժանում: Նրանք ատելություն են քարոզում: Արդյունքում չափավորները հարձակման են ենթարկվում: Օրինակ' Ռուանդայում հութուների վրա հարձակվեցին ու նրանց սպանեցին: |
| 7. Նախապատրաստում | Այդ խմբերն էլ վերջնական լուծում են նախապատրաստում:Սկսում են կիրառել նման բառեր. էթնիկ զտումներ, հակաահաբեկչական գործողություններ: Զենքեր են բաժանում ոճրագործներն: Օրինակ' Նացիստական Գերմանիայում տրվեց հրեական հարցի վերջնական լուծումը: |

| | |
|---|---|
| 8. Հալածում | Զոհերին իրարից զատում են՝ նրանց ինքնությունից ելնելով: Ունեցվածքը ուրացնում են:Մարդկանց ստիպողաբար ուղարկում ճամբարներ:Սկսվում են ջարդեր: Օրինակ՝ Սերբերը Բոսնիայի մահմեդականներին ստիպողաբար ուղարկեցին ճամբարներ: |
| 9. Բնաջնջում | Սկսվում է սպանությունը: Ոճրագործները չեն գիտակցում,որ իրենց զոհերը մարդ արարածներ են: Օրինակ՝ միլիոնավոր հրեաներ սպանվեցին նացիստական Գերմանիայի կողմից: |
| 10. Հերքում | Ցեղասպանության փաստը միշտ էլ հերքվում է: Մեղադրում են զոհերին: Ապացույցները ոչնչացվում են: Օրինակ՝ Թուրքական կառավարությունը ժխտում է հայոց ցեղասպանությունը: |

2021 © Genocide Watch

*Թարգմանողթյուն ըստ նատ Հիլլ և Լուսինե Խաչատրյան*

*Տասը փուլերը գծային մոդել չեն, բազմաթիվ փուլեր կարող են միաժամանակ առաջանալ*